թագուցանելով ողջանան, այլ պատմելով բժշկացն. նոյնպէս և ոչ մեղքն։

Օ Էնոն առ այնոսիկ որ առաւել փափկանային և պարծէին զի շատ ուներին գանձս, ասէ. Պա ուրեմն ոչ մեղադրելի են խոհակերքն յաղի առնել զխորտիկն. զի ունին շատ աղ։

Պիոգինէս 'ի յոյժ մատռուակէն հեղոյր զգինին. և 'ի մեղադրելն ասէ. Թէ ըմպեմ՝ զինքն և զիս կորուսանէ. լաւ է սմա միայն կորնչել։

Յնպէս լեր առ ծնողս քո, որպէս կամիս լինել առ քեզ զորդիս քո։

Օրդիս քո փութա խրատեալս Թողուլ քան Թէ հարուստս։

Փայտ 'ի հրոյ մաշի, և տուն 'ի շոգմոգայ։

Ինդալ պարտ է ընդ տրտմեցուցանելն քան ընդ շոգմոգելն. քանզի նոքա զգաստացուցանեն, և սոքա Թոյլս և ծոյլս գործեն։

Ի վերայ շոգմոգայ որպէս 'ի վերայ գերեզմանաց անուն մարդոյ միայն գըրեալ է։

Ոչ է պարտ ընտրել որ 'ի մեծամեծ քաղաքաց իցեն, այլ որ մեծամեծք 'ի քաղաքաց ելանիցեն։

Որոյ չէ լուել՝ նա և ոչ խօսել։

Ի լուութենէն պարտ է առաւել երկնչել քան 'ի ձայնէն։

Տունկք յարմատոյ աՀեն, և փառք 'ի հեզութենէ։

Իշխանութիւն մեծ է ոչ ընդունել պատիւ, այլ արժանի պատուոյ զանձն կացուցանել։

Ի կենաց աշխարհիս որպէս 'ի սեղանոյ պարտ է յառնել. ոչ քաղցեալ և ոչ յագեալ, ոչ ծարաւ և ոչ արբեալ։

Որ 'ի ժամ մահու կտակս գրեն, նըման են որք 'ի ժամանակի նաւակոծութեան զհարկաւոր նիւթս որոնեն։

Ինդ իշխանի պարտ է կալ որպէս ընդ կրակի. մի ամենևին մօտ զի մի այրեսցէ, և մի կարի հեռի զի մի ցրտասցի։

ՈՍԿԻՓՈՐԻԿ

Յաջորդաց Բարիւրը մոռանալ։

Ռաբելացիոց թագաւորն քազմութեամբ զօրացն գայր մտանէր 'ի քաղաքն. և տեսաւ ծեր մի զի ամբարեալ նիս՝ տնկէր, և ասէ. "Ո՛վ ծեր, զայդ ընդէր տնկես. զի 'ի քառասուն տարին ապա պտղաբերի, և դու այսօր և վաղիւն մեռանիս"։ Նա նա ասէ. "Թագաւոր, մին մարդ տնկեալ էր՝ ես վայելեցի. ես տնկեմ՝ գայ մին մարդ այլ վայելէ"։ Ասէ թագաւորն. "Տուք նմա հազար դահեկան, զի բարի խերանդէշ[2] մարդ մի է"։ և նորա առեալ գոհացաւ զԱստուծոյ։ Ասէ թագաւորն. "Ինդէր գոհանաս"։ ասէ. "Գոհանամ՝ որ ամէն մարդ 'ի քառասուն տարին վայելէ, ես այսօր վայելեցի"։ Ասէ. "Դարձեալ տուք նմա հազար դահեկան"։ դարձեալ գոհացաւ։ Ասէ թագաւորն, "Դարձեալ ընդէր գոհացեր"։ Ասէ. "Գոհանամ Աստուծոյ որ ամէն տունկ 'ի տարին մին հետ տայ պտուղ, իմ ծառ այսօր երկու անգամ ետ պտուղ"։ և հաճոյ թուեցաւ թագաւորին։

ՈՍԿԻՓՈՐԻԿ

Ժամանակին յարմարել։

Պարտ է աւագ աչք շուրջ հայել
և ժամանակին ծառայել։

ՄԱԳԻՍՏ.

Յաճտնի է ամենուն՝ կենաց քաղցրութիւնը, ժամանակին գինը, և անոր լաւ անցնելուն պտուղը, թէպէտև աս ճանչցուած ճշմարտութիւններս 'ի գործ դնողները խիստ քիչ են. չենք ուզեր աս ծանօթ բաներուն վրայ նոր ծանուցումն ընել, հապա ժամանակին և և մեր մէջ մէկ զարմանալի վերաբերութիւն մը կայ որ անոր վրայ կ'ուզենք

1 Արմաւենի. խուրմա աղաջը։
2 Խայրենդիշ. բարեմիտ, բարեսիրտ։

խօսք մը ընել, որովհետեւ այնչափ ծանուցուած չէ․ աս է յարմարիլ ժամանակին, այսինքն ատենին և տեղւոյն և անձանց ուզածին յարմարիլ։

Այս բանիս որչափ հարկաւոր և մեծ բան ըլլալը իմացընելու համար, կը նըմանցընեմ մեր կեանքը նաւու մը աշխարհիս ծովուն մէջ, որ անդադար յորձանքի մը մէջ կ՚ընէ իր ճամբան, այսինքն ժամանակին մէջ․ իր հովերն են տեսակ տեսակ յաջողութիւններ ու ձախորդութիւններ․ աս հովերուն օգուտը առնելու կամ փնասներէն փախչելու, և իր նաւահանգիստը հանելու համար ինչ պէտք է․— մէկ ղեկ մը որ իր նաւը շտկէ․ ո՞րն է աս ղեկը․— ժամանակին յարմարիլը։ Ղանց ատոր կրնայ նաւերնիս ոչ միայն վտանգիլ ու կորսուիլ, այլ թերեւս կրնայ յաջող հովու ալ հանդիպիլ ու նաւահանգստի մը հանիլ, բայց այն նաւահանգիստը մեր ուզածը չէ նէ՝ մեզի ինչ օգուտ։ Մեծ զարմանք․ աս բանիս ուշ չդնելով՝ շատեր լաւ նաւահանգիստներ ալ ելան, լաւութեան ճամբայ գնացողները միշտ լաւը կը գտնէին, բայց պէտք եղած լաւը չգտան, որովհետեւ դէպ ՚ի անոր չէին շտկած նաւերնին՝ ժամանակին յարմարելու ղեկովը։ Ուրեմն ժամանակին յարմարիլը շատ հեղ քան զառաքինութիւնն ալ մեծ է․ այս բանիս վկայած են իմաստունք և սուրբք, մենք ալ օրինակով մը պարզենք։ Աղօթք ընելը այնչափ ազնիւ և սուրբ բան է որ գրեթէ երկրիս վրայ երկինք է․ ուստի թէ որ ես ալ աղօթասէր եմ՝ շատ բարի է․ բայց թէ որ ժողովի մը մէջ մտնեմ ուր որ տեսակ տեսակ բաներու վրայ զրոյց կ՚ըլլայ, և ես իմ աղօթասիրութեամբս անկիւն մը արձանանամ, կամ պռկունքներս վեր վար շարժեմ, կամ համարիչս դարձընեմ, և ուզելով կամ չուզելով իմացընեմ իմ աղօթական ըլլալս, ո՞չ ապաքէն արժանապէս ծաղր կ՚ըլլամ, և թերեւս բարեպաշտութիւնն ալ ինծի հետ ծաղր ըլլալ կուտամ։

Ինչ առաւել ծաղրելի կամ պախարակելի կ՚ըլլայ մարդ, թէ որ այս ժամանակին չյարմարիլը, որ՝ մէկ առանձնականութիւն կամ կամահաճութիւն մըն է, կամ թէ ըսեմ ինքնահաւանութիւն, արտաքին բաներու մէջ ցուցընէ․ զոր օրինակ թէ որ մեր դրացիներէն մէկը՝ մուշտակ որ հագնի, մազը ներսի դին առնէ՝ կաշին դուրս, ըսելով թէ կան Եւրոպացիք ալ որ այսպէս կ՚ընեն, կամ թէ ասանկ չընենք նէ՝ բրդոտ անբաններու կը նմանինք, կարծեմ քանի մը յանդիմանութեամբ ծիծաղի արժանի կ՚ըլլայ․ թէպէտեւ իրօք տեղ ալ կայ որ իրենին պէս կ՚ընեն մարդիկ, կամ ատեն կուգայ որ մենք ալ այդպէս պիտի ընենք, բայց պէտք է սպասել այն ատենին կամ տեղւոյն․ իսկ թէ որ մէկը շատ անհամբեր է ասանկ բաներու՝ գոնէ բարեկենդանին սպասէ կամ յիմարանոցին դուռը ձեռք առնէ․ իսկ մենք մեր ժամանակին յարմարելով՝ երես անցընենք։

Արդ այն բաներուն մէջ որ աս մուշտակին կողմերուն պէս ըստ ինքեան ոչ լաւ են և ոչ գէշ, հապա ժամանակին ախորժակովը աւելի կամ պակաս վայելուչ կ՚ըլլան, պէտք է յարմարիլ այն ախորժակացը։ Իսկ այն բաներուն մէջ որ ասանկ անտարբեր չեն, հապա երեսներուն մէկը սեւ ու մէկալը ճերմակ է, և ժամանակը դժբաղդաբար սեւին զարնուած կ՚երեւնայ, ան ատեն բանը դժար է․ խոհեմութիւնն ու կտրճութիւնը ձեռք առնելու է․ թէ որ այն բանին մէջ լաւ կամ գէշ մաս կայ, բայց բարոյական գէշ (որ է մեղանչական) չկայ՝ դարձեալ ժամանակին կրնայ յարմարուիլ՝ թէ որ ընդհանուր եղած է սովորութիւնը․ իսկ թէ որ բարոյական գէշ կայ, այն ատեն ժամանակը անիրաւ է, անիրաւութեան պէտք չէ մտիկ ընել, չարին պէտք չէ յարմարիլ։ Միայն թէ խոհեմութիւնը կը ցուցընէ որ այսպէս բաներու մէջ ալ շատ հեղ պիտի գործածենք այս առածս․ “Սուտ ոչ երբէք, ճշմարտութիւն ոչ միշտ„․ այսինքն, ամենեւին սուտ կամ չար պէտք չէ ընել, բայց հարկ չէ ամէն ատեն անոր ներհակ ճշմարտութիւնը կամ բա-

րին յայտնել. զոր օրինակ, թէ որ տեսնես թէ տասը հոգի գինիով կամ կըքով գլուխնին տաքցուցած՝ նախատեն մէկը ու սպառնան, և զայն պաշտպանողը իրենց թշնամի սեպեն, դու պէտք չէ որ անոնց հետ նախատես կամ հայհոյես զայն, (սուտ ոչ երբէք)։ բայց պէտք ալ չէ որ անանկ ատեն պաշտպանես կամ ջատագովես զնախատուածը։ (Ճշմարտութիւն ոչ միշտ)։ չըլլայ թէ այն տաքցած գլուխներէն վրադ կայծակ մը իջնայ, կամ ևս առաւել զինքն ալ ըզքեզ ալ հայհոյեն. դու մտքէդ օրհնէ, ու գլուխդ կախէ անցիր։

Ըլլայ որ մէկը այս խօսքերնիս պաշտպանութիւն կարծէ այն սուտ ու անիրաւ ժամանակին յարմարութեանը որ թեթևագլուխ ու անզգամ մարդիկ կը պահանջեն և կը խաբեն նորահասները, ըսելով թէ հիմակուան ատենս, հիմակուան երիտասարդութիւնը, հիմակուան նորասիրութիւնը, հիմակուան լուսաւորութիւնը (հիմակուան անխելքութիւնը) կ՚ուզէ այս ու այս ազատութիւններ, այս ու այս թեթև սովորութիւններ, այս (ոչ անմեղ) ըզբօսանքները, այս (վտանգաւոր) ընկերութիւնները, այս (ապօրինաւոր) ընտանութիւնները, այս (համարձակ կամ լիրբ) ընթերցմունքները և զրոյցքը, և այլն և այլն։ Ուղիղ տրամաբանութիւնը կը ցուցընէ աս պահանջմունքներուն սուտութիւնն ու չարութիւնը. որովհետև ասոնք բարոյականի կը վնասեն. իսկ արդ ո՛ր բանն որ բարոյապէս գէշ է՝ հետևելի չէ։

Իսկ մեր ժամանակին յարմարիլը պիտի ըլլայ անվտանգ անտարբեր բաներու մէջ, և մանաւանդ գովելի և օգտակար բաներու մէջ. և դժուար միջոցներու մէջ՝ ամենայն խելք և հնարք բանեցընելու է որ առանց գէշը ընելու՝ հասարակաց յարմարինք։ Այս է մեր իմաստուն Մագիստրոսին ըսածը առ Պետրոս կաթուղիկոս, "Պարտ է աւագ աչօք շուրջ հայել, և ժամանակին ծառայել"։ Աւագ աչօք, այսինքն լաւ քննելով, չէ՛ վերիվերանց, որպէս զի չըլլայ թէ առանց հարկի՝ բան մը տեսնենուս պէս հետևինք. միանգամայն և լաւ քննենք ժամանակին միտքը և բոլոր պարագաները, աս է շուրջ հայել. որպէս զի չըլլայ որ մէկ բանի մը յարմարելով՝ ուրիշ բաներու անյարմար ըլլանք. և ծառայել ժամանակի՝ ազատ կամօք, չէ գերի ըլլալ, գիտնալով որ անկարելի է ժամանակին իշխանութենէն ազատիլ. և ըստ ասիական առածին՝ պէտք է որ եթէ ժամանակը մեզի չյարմարիր՝ մենք ժամանակին յարմարինք։

Ժամանակին յարմարողին բախտն է ազատ ըլլալ ծաղրէ ու բամբասանքէ, հանգստութիւն, խելացութիւն, քաղաքավարութիւն, անուշութիւն, բարեկամութիւն, կարեկցութիւն, օգնականութիւն. իսկ չյարմարողին վաստակն է ծաղր ըլլալ, թեթևսոլիկութիւն, տգիտութիւն, տմարդութիւն, զզուումն, ինքնահաւանութիւն, նորափթիթ ծաղկանց մէջ ցամքած պրաս մը ըլլալ, փայլփլուն յախճապակեաց մէջ հնցած պտուկ մը՝ ան ալ մէկ կողմէն ճաթած։

Արդ այս ամենահարկաւոր և օգտակար պէտքս առանձնականաց ազդելէն ետև, մէկ մ՚ալ ՚ի ներքին սրտէ ընդհանուր ազգերնուս գոչենք, Պարտ է աւագ աչօք շուրջ հայել և ժամանակին ծառայել։ Տարիները առանձնական մարդկային կենաց չափն են, ժամանակը՝ ընդհանուր մարդկութեան. ինչպէս որ առաջնովը մենք մեր վրայ փոփոխութեան հարկ կ՚իմանանք և կը յարմարինք կենաց զանազան հասակներուն ախորժակներուն, այսպէս ալ պէտք է ժամանակին փոփոխութեանցը և ախորժակացը յարմարինք անձամբ և ազգով։ Թէ որ մտքերնիս բերենք այս ետքի տասը-տարուան մէջ աշխարհիս հանդիպածները, մտքերնիս բերենք թէ մեր մէջ և թէ օտարաց մէջ հանդիպածները, աչուընուս տակը առնենք ներկայ ատենիս եղածներն ալ, և քիչ մ՚ալ խելքով գուշակենք անոնց հետևանքը կամ ապագայ ըլլալիքը, մեծ

զարմանքով կը տեսնենք թէ անանկ բաներ հանդիպած են որ առաջ տեղ տեղ յիսուն տարի՝ տեղ տեղ հարիւր տարի կամ աւելի դարեր պէտք կը կարծուէր զանոնք ընելու. և ասով յայտնի կ'ըլլայ որ ժամանակները կը փոխուին, ժամանակը փոխուեր է, ժամանակը կ'ուզէ փոխուիլ, ժամանակը փոխուելու վրայ է։

Ի՞նչ է այս նոր ժամանակիս ուզածը[1]։ — Հոգի յառաջադիմութեան, հոգի ազգասիրութեան, հոգի բարոյական զարգացման, յառաջացումն մարդկային իրաւանց և նպատակի, համանմանից ձեռնտուութիւն և միութիւն. աս ժամանակս կ'ատէ կը մերժէ չուզեր ընտանի խռովութիւններ, վէճեր, հակառակ կարծիքներ, ատելութիւններ. չուզեր ծուլութիւն, անտարբերութիւն, դանդաղութիւն, ապշութիւն։ Այս բանիս հազար գեղեցիկ օրինակներ կ'ընծայեն մեզի Եւրոպա և Ամերիկա. Ասիոյ մէջ ալ ամենէն աւելի Օսմանեան մեծազօր տէրութիւնը. բայց միթէ ինքն իսկ մեր ազգն ալ այս վերջի ատեններուս ըրած ջանքովը չի՞կրնար օրինակ ըլլալ թէ իր ուրիշ ընելիքներուն և թէ իր ուրիշ անձանց՝ որ կամ ազգասէր են, կամ ազգասէր կ'ըսուին, կամ ազգասէր ըլլալու պարտք ունին։ Պարտ է աւագ աչքք շուրջ հայել. նոր արթնութիւն պէտք է, նոր աշխոյժ, նոր ջանք ստանալ, նոր ուժով յառաջադիմութեան ճամբան ընթանալ, և մեր՝ աշխարհիս առաջին ազգ ըլլալուն պարծանքը չկորսնցընել. այլ մնաւանդ՝ բոլոր աշխարհիս նոր օրինակ մը ընծայել ջանից և ազգասիրութեան. և մեծազօր Օսմանեան տէրութեան ցրցուցած խոհեմ ու գործունեայ ջանքը՝ որով իր հպատակաց օրէ օր աւելի հանգիստ ու երջանիկ վիճակ ունենալուն կ'աշխատի՝ նայինք որ մեր հաւատարմութեամբն ու գործունեայ խոհեմութեամբն ալ աւելի պտղաբեր ընենք։ Ժամանակը կը ստիպէ, կը պահանջէ, կը բողոքէ, և ամենուս առ հասարակ կը բողոքէ. պէտք է որ ամէնքս ալ յարմարինք։ Այսին և կան մեր մէջ խելացիք, ազգասէրք և ժամանակին յարմարողք. բայց ատոնք բաւական չեն բոլոր ազգին պիտոյիցը. պէտք է որ բոլորն ալ անոնց և ժամանակին յարմարի. ամենուս ալ Պարտ է, պարտ է աւագ աչքք շուրջ հայել և ժամանակին ծառայել. փոխուեցան ժամանակք, փոխուին և բարք։ Շատ տարի չէ որ ազգերնուս մեծ մասը՝ իր գլխարկը փոխեց. և թէ որ այսօր իր կարմրագդակ ընկերութեանը մէջ՝ մէկը իր հին խոշոր սեւագունդ օղապարիկ խալփախովը ներս մտնէ, յայտնի է թէ ինչպէս ծաղր ու ծանակ կ'ըլլայ։ Սակայն որչափ աւելի ծիծաղելի և արհամարհելի կ'ըլլանք մենք՝ թէ որ աշխարհիս յառաջադէմ ընկերանոցին մէջ՝ բարակ մտքով, զարգացուն խորհրդով, ջանասէր հոգւով վառուած գլուխներուն մէջ, մեր հին ու խոշոր, ծանրաշարժ ու նախապաշարեալ գլուխիս տնկենք ու կենանք։

Բայց ըսինք, և դարձեալ կ'ըսենք. մեր ժամանակի յարմարիլը պիտի ըլլայ դիպուածները լրագրաց մէջ կը կարդանք ու աչքով ալ կը տեսնենք, բայց ամէն տեսածնիս կամ լսածնիս մեզի չեն յարմարիր, ուստի մենք ալ ամենուն ամէն բանի մէջ հարկաւ չենք կրնար ուզել որ նմանինք՝ առանց մեր վնասը ուզելու։

---

1 Թէ որ ամէն բան լաւն ու գեղն ունի, ևս առաւել ժամանակը՝ որ ամենուն ծնողն է. լաւ ծննդոցը հետևինք, գեղերը թողունք։ Աշակերտք կը ջանան իրենց վարժապետին նմանիլ, չէ անոնց պակասութեանցը, հապա բարեմասնութեանցը։ Կիկերոն զԴեմոսթենէս օրինակ առաւ ու նմանեցաւ, չէ անոր կակազ լեզուին և դողդողուն ուսերուն, հապա ազգու զուրցուածքին և ճարտասանութեանը։ Կարակալլա զԱղեքսանդրը իրեն օրինակ առաւ. և որովհետև Աղեքսանդրի վիզը քիչ մը ծուռ է եղեր, ինքն ալ վիզը կը ծռէր, և իրաւ Կարակալլա ասով և միայն ասով նմանեցաւ մեծին Աղեքսանդրի։ Ո՞վ խելացիք, ձեր օրինակը Կիկերոնն է. իսկ անխելքները առանց Կարակալլայի օրինակին կարօտելու ալ, ժամանակին վզին ծռած դին իրենք զիրենք ծռելով մէջքերնին ալ կը կոտրեն։